Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

19 հուլիսի 2012 թվականի N 29

---

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ՝

1) Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությունից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումներին՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի N 650-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովում (այսուհետ՝ հանձնաժողով) ընդգրկված պետական կառավարման մարմինների ղեկավարներին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական, գիտական ու կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն ռազմավարությունից բխող միջոցառումների կատարման, ինչպես նաև կոնվենցիայի իրագործման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների մասին:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա երրորդ տասնօրյակում՝

1) ամփոփել սույն որոշման 2-րդ կետում նշված տեղեկատվությունը, քննարկել հանձնաժողովի նիստում և ներառել Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիայի իրագործման վերաբերյալ զեկույցներում.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել հաշվետվություն սույն կետի 1-ին ենթակետում նշված միջոցառումների կատարման ընթացքի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հուլիսի 24
Երևան